



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

<<ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028թթ.

ՀԱՎԱԿՆՈՐՔ՝

ԱԼՎԱՐԴ ԽԱԶՈՒՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. Դպրոցի բնութագիրը**
- 2. Դպրոցի առաքելությունը**
- 3. Իրավիճակի վերլուծություն**
- 4. Կառավարման և խորհրդակցական մարմիններ**
- 5. Դպրոցի զարգացման ուղղությունները և ակնկալվող արդյունքները**
- 6. Չարգացման ծրագրի խնդիրներն ու նպատակները**
- 7. Առկա խնդիրները և առաջարկվող լուծումները**
- 8. Ծրագրի ֆինանսավորման ապահովումը**
- 9. Դպրոցի աշխատանքի թափանցիկությունը**
- 10. Չարգացման ծրագրի պլանավորման և իրականացման ռիսկերը,
դրանց ազդեցության նվազմանն ուղղված գործողությունները**
- 11. Ծրագրի կատարման չափանիշները, վերահսկողությունը**
- 12. Չարգացման ծրագրի իրավական հիմքերը**

Դպրոցի բնութագիրը

ՀՀ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1974թ. -ին որպես տիպային դպրոց:

15.01.2003թ-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում: Հարկ վճարողի հաշվառման համարն է (ՀՎՀՀ) 04407649: Շենքի ամրացման աշխատանքներ է կատարվել 2018թ-ին, սակայն կոսմետիկ աշխատանքներ կատարված չէ: Դպրոցի շենքի տանիքը ամբողջովին վերանորոգված է, ջրահեռացման խողովակները նույնպես:

Դպրոցի հասցեն. մարզ Արմավիր համայնք Նոր Կեսարիա 14 փողոց 20 շենք «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

Դպրոցը ունի երեք մասնաշենք: Առաջին և հիմնական մասնաշենքը եռահարկ է, որտեղ գտնվում են բոլոր դասասենյակները, ուսուցչանոցը, գրադարանը, համակարգչային սենյակը, նախակրթարանը, ճաշարանը, ռազմագիտության կաբինետը և սան հանգույցը:

Երկրորդ մասնաշենքում է գտնվում հանդիսությունների սրահը, որը չունի ոչ մի հարմարություններ միջոցառումներ անցկացնելու համար: Առկա են կոտրված, հնամաշ նստարաններ, քանդված պատեր, կիսաքանդ բեմահարթակ:

Երրորդ մասնաշենքում է գտնվում սպորտ դահլիճը, որը նույնպես գտնվում է շատ վատ վիճակում՝ չկա գույք, չկա ժամանակակից նորմերին համապատասխան պայմաններ: Առկա են քանդված պատեր, վնասված հատակ և պատուհաններ: Դպրոցը կից ունի 3,1329 /հա/ հողատարածք, որի կադաստրային ծածկագիրն է 04-073-0005-0001: Գրանցված իրավունքի տեսակը՝ Մեփականություն:

Դպրոցը աշխատում է միաժամանակ և 2022-2023 ուս. տարվա դրությամբ դպրոցում սովորում են 217 աշակերտ.

Տարրական-85 աշակերտ

գերազանց՝ 14 աշակերտ

Հիմնական-99 աշակերտ

գերազանց՝ 6 աշակերտ

Ավագ -33 աշակերտ

գերազանց՝ 1 աշակերտ

217աշակերտներից յոթը ԿԱՊԿՈՒԲ երեխաներ են, որոնցից մեկը ունի աուտիզմ:

Նախակրթարան հաճախում է 22 երեխա. մեկ խումբ:

Դպրոցում աշխատում են 22 ուսուցիչ, բոլորն ունեն բարձրագույն կրթություն միայն մեկ ուսուցիչ ունի միջնակարգ մասնագիտական կրթություն:

Դպրոցը ունի պահակ-3 հոգի

Հավաքարար-2 հոգի

Հաշվապահ -1

տնտեսվար -1

գործավար -1

Ուսուցիչներն աշխատում են միջին ծանրաբեռնվածությամբ: Դպրոցում գործում են խորհրդակցական մարմիններ, որոնք ունեն իրենց կանոնադրությունը:

Դպրոցում այս պահի դրությամբ վերանորոգվում է 4 դասասենյակ, որոնք պետք է համարվի ժամանակակից սարքավորումներով և գույքով, պետական բյուջեի միջոցներով

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հեղինակության բարձրացումը իմ 5-ամյա զարգացման ծրագրի առաքելություններից մեկն է, քանի որ պետական քաղաքականության և հասարակական գիտակցության մեջ որակյալ կրթությունը և հայրենասիրությունը գերագույն արժեք է: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը՝ ազգային դպրոցն է, որի մեծագույն նպատակը ազգային արժանապատվության գնահատումն է: Լավ հատկանիշներով դպրոցի կրթական ոլորտում անհրաժեշտ է կատարել արմատական փոփոխություններ:

- 1.Բոլոր աշակերտները սիրեն դպրոցը և սիրով, մեծ ոգևորությամբ հաճախեն դպրոց:

- 2.Յուրաքանչյուր դասից աշակերտը ձեռք բերի նոր գիտելիք և հմտություն:

- 3.Զարգացնի սովորողի միտքը, խոսքը և ճկունությունը:

- 4.Դպրոցը պետք է ունենա զարգացման իր տեսլականը:

- 5.Ուսուցիչները մշտապես զբաղվեն ինքնակատարելագործմամբ:

- 6.Աշակերտների մեջ զարգացնել այն մոտիվացիան, որ իրենց ամեն մի աշխատանքը և ուսումը նպատակային է և միասին պետք է հաղթահարենք առկա խնդիրները ուսման բնագավառում:

- 7.Ոգևորել աշակերտներին, քանի որ մարդու կայացումը դպրոցում միայն հնարավոր է ներդաշնակության մթնոլորտում:

- 8.Սովորողներին դաստիարակել մարդասիրության, հայրենասիրության և պետականության ոգով:

9. Պետական կրթական չափորոշիչները ելնելով և կրթության բովանդակությամբ սահմանված, սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

10. Յուրաքանչյուր աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողություններին համապատասխան ներառել ուսումնառության գործընթացի մեջ, հաշվի առնելով սովորողի անհատական և տարիքային առանձնահատկությունը:

11. Հմտությունների ձևավորում և զարգացում, մասնագիտական կողմնորոշման ապահովում, կրթական կարիքների բարելավում:

12. Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրմամբ որակյալ կրթություն ստանալու անհրաժեշտ պայմանների ձևավորում:

13. Սովորողների ինքնահաստատում, որոշակի ոլորտներում հաջողությունների ձեռքբերում, բարենպաստ պայմանների ստեղծում:

14. Համայնքի հետ ակտիվ համագործակցում, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:

15. Չարգացնել թվային գրագիտությունը և համակարգչային գիտությունը:

16. Չարգացնել հաշվարկային և ալգորիթմիկ մտածողությունը:

17. Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունների ձևավորում

18. Գիտատեխնիկական, մաթեմատիկական և մշակութային կարողականությունների ձեռք բերում:

Դպրոցի, ուսուցչի դերը պետք է բարձրացնել, նպաստել կրթական համակարգի ճիշտ ուսուցման և զարգացման ձևավորմանը: Կրթական ոլորտում որպեսզի ուսուցիչը հասնի իր նպատակին՝ ունենա կիրթ, շրջահայաց, հայրենասեր և հմտություններով օժտված շրջանավարտ պետք է փոխադարձ վստահություն և օգնություն լինի ծնողի, համայնքի կողմից:

Դպրոցի առանցքային կերպարը ուսուցիչն է, ուստի գրագետ ուսուցիչը լավ օրինակ է աշակերտներին: Պետք է շարժվել կրթական համակարգի կայացման ճիշտ ճանապարհով, որպեսզի ունենանք գաղափարապես զարգացած շրջանավարտներ:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»-ի հիմնական և գլխավոր խնդիրը դպրոցի սանիտարահիգիենիկ վիճակն է, ջարդված, հնամաշ գույքը և 21-րդ դարի պահանջներին ընդհանրապես չհամապատասխանող դասասենյակները: Ուսուցչանոցում չկա գեթ մեկ համակարգիչ, որպեսզի ուսուցիչները աշխատեն: Աշակերտները զրկված են գեղեցիկ, նորոգված դասասենյակներում դաս անելուց: Առավել ցավոտ է, որ նույնիսկ նորմալ սեղան աթոռներ չունեն:

Դպրոցում չկա շախմատի դասասենյակ, չկան համապատասխան քարտեզներ, մարզադահլիճը զրկված է գույքից և ունի վերանորոգման կարիք: Այս շարքը կարելի է անվերջ շարունակել, քանի որ դպրոցը ունի բոլոր տեսակի գույքի և վերանորոգման կարիք: Միջանցքներում և շատ դասասենյակներում բացակայում է էլեկտրականությունը: Միջոցառումների սրահը նույնպես գտնվում է անմխիթար վիճակում, որը խանգարում է պլանավորած միջոցառումների անցկացմանը:

Ուսուցչի հագեցած աշխատանքի և լիարժեք նյութ հաղորդելուն նպաստում են նաև տեխնիկայի հագեցվածությունը և համապատասխան պայմանները:

Խոստանում են, որ այս ամենի բարելավման համար լինելու են հետևողական, որպեսզի աշակերտները սովորեն բարեկարգված դասասենյակներում, աշակերտական նոր գույքի համալրմամբ:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p><i>ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՉՄ</i></p> <p><i>.Ուսուցիչները պարտանճանաչ և պատասխանատու ձևով կատարում են իրենց պարտականությունները</i></p> <p><i>.Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ.</i></p> <p><i>.Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ, փորձառու ուսուցիչները իրենց փորձը դասախոսների միջոցով փոխանցում են սկսնակ ուսուցիչներին:</i></p> <p><i>. Դպրոցի բոլոր 21 ուսուցիչները ունեն բարձրագույն կրթություն և համապատասխանում են իրենց մասնագիտությանը</i></p> <p><i>. Մասնակցում են կամավորատեստավորմանը</i></p> <p><i>. Ակտիվորեն մասնակցում են ՀՏԶ-ի դասընթացներին</i></p> <p><i>. Դպրոցի ուսուցչական կազմում հիմնականում երիտասարդ ուսուցիչներ են Մինչև 30 տարեկան-----8 ուսուցիչ</i></p>	<p><i>.Դպրոցը ունի հոգեբանի և հատուկ մանկավարժի թափուր հաստիք</i></p> <p><i>.Դպրոցում չկա Լավագույն ուսուցիչ կոչմանն արժանացած ուսուցիչ</i></p> <p><i>.Կամավորատեստավորում անցած ուսուցիչներ չկան</i></p> <p><i>.Ստեղծագործական ներուժը լիարժեք իրացնելու հնարավորությունների պակաս</i></p> <p><i>.Պատասխանատու աշխատանք, ծանրաբեռնված գրագրություն, բայց ցածր աշխատավարձ</i></p> <p><i>. Միջն. մասնագիտական կրթության ուսուցչի կամավորատեստավորում</i></p>

Մինչև 40 տարեկան-----7 ուսուցիչ
Մինչև 55 տարեկան-----1 ուսուցիչ
55 և ավելի -----5 ուսուցիչ

.Դպրոցը համագործակցում է այլ դպրոցների հետ

.Առցանց կրթության գործիքների կիրառում

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻՎՎՈՐՈՒՄՆԵՐ

.Դպրոցում գործում է մեթոդախաղորումները՝ Հումանիտար

Բնագիտական

Դասվարական

Մեթոդախաղորումները կատարում են իրենց նիստերը և կազմում արձանագրությունները, յուրաքանչյուր կիսամյակում տրվում է գիտելիքների ստուգման համար գրավոր աշխատանքներ և արձանագրվում

. քննարկում են փոփոխության ենթարկված դասագրքերը և ծրագրերը

. կազմակերպում են միջոցառումներ, առարկայական մրցույթներ

. իրենց մտահոգությունները և կարծիքները ներկայացնում են մանկավարժական խորհրդի նիստերին

. հետևողական են ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման ծրագրային

առանձնահատկություններին

ՍՈՎՈՐՈՂՆԵՐ

. Ակտիվ, ինքնուրույն միտք արտահայտող աշակերտներ

.Սովորելու և նորը յուրացնելու մեծ ցանկություն , ձգտում

.Դպրոցն ավարտած աշակերտները սովորում են այլ ուսումնական հաստատություններում՝ ԲՈՒՀ, քոլեջ, վարժարաններ

.Ինքնուրույն կազմակերպում են միջոցառումներ, ունեն սեփական նախաձեռնություն

.Միրում են օգտվել գրադարանից ընթերցասեր են

. Կամավորական աշխատանքի ցանկություն և ձգտում

. առանձնահատուկ ուշադրություն են

.Մեթոդական միավորումների նիստերի քանակի պակաս

.Նորագույն նվաճումների քննարկում և մեթոդական ընթերցումներ

.Օլիմպիադաների կազմակերպում

. յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնել հաշվետվություն, ըստ կատարած աշխատանքների և ըստ ձևանմուշի

. լինել անկողմնակալ,

.հաճախակի կատարել դասալսումներ

. բաց դասերի քանակի ավելացում

.Դպրոցում քիչ են գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը՝ ընդամենը 21 աշակերտ:

.Մարգարահյիճի վատ, ոչ բարվոք վիճակը և գույքի պակասը ազդում է սովորողների ֆիզիկական պատրաստվածության և սպորտի նկատմամբ հակվածությունը

.Համակարգիչներից քիչ օգտվելու հնարավորությունը

.Միջոցառումների պակասը Կրկնուսույցների մոտ պարսպում

.Ազդեցիվ վարք և կախվածություն հեռախոսից

. Անտարբերություն ուսման նկատմամբ

. գրադարանից օգտվում և ընթերցասեր են յուրաքանչյուր դասարանի միայն 10-15 %

դրսևորում Կապկու երեխաների հանդես
 1-ին դասարան-----18 աշակերտ
 2-րդ դասարան---30 աշ. գերագանգ—5աշ.
 3-րդ դաս. ---16 աշ. գերագանգ---4 աշ.
 4-րդ դաս. ---20 աշ. գերագանգ----5 աշ.
 5-րդ դաս. ---23 աշ. գերագանգ----4 աշ.
 6-րդ դաս. ---25 աշ. գերագանգ ----0
 7-րդ դաս. ---19 աշ. գերագանգ-----0
 8-րդ դաս. ---19 աշ. գերագանգ ----2 աշ.
 9-րդ դաս, ---14 աշ. գերագանգ-----0
 10-րդ դաս --10 աշ. գերագանգ-----0
 11-րդ դաս. ---9 աշ. գերագանգ ----0
 12-րդ դաս. ----13 աշ. գերագանգ-----1 աշ.

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

. Վերանորոգվում է թվով 4 չորս
 դասասենյակներ՝ աշխարհագրության,
 ինֆորմատիկայի, ֆիզիկայի և քիմիա-
 կենսաբանության կաբինետները, լաբորատոր
 սարքավորումների պահեստը:
 . դպրոցը ունի վերանորոգված և կահավորված
 նախակրթարան
 . վերանորոգված կահավորված ճաշարան 1-
 ից-4-րդ դասարանների աշակերտների համար
 . համակարգիչ---4 հատ
 . մոնիտոր -----1հատ
 . էլեկտրոնային գրատախտակ---1 հատ
 . տեխսցրիչ -----1հատ
 . երաժշտական սարքավորումներ,
 բարձրախոս
 . լուսավոր, լայն միջանցքներ
 . ջեռուցման համակարգ՝ ջեռուցվում են բոլոր
 դասասենյակները
 . վերանորոգված է ուսուցչանոցը, ունի
 համապատասխան սեղաններ, աթոռներ,
 բազմոց
 . սան հանգույց
 . 1-ին և 2-րդ հարկերի միջանցքները
 սալիկապատ են
 . դպրոցը ընդգրկված է հիմնանորոգման
 ցուցակում
 . դպրոցի հողատարածքի առկայություն և
 պողատու ծառեր տնկելու հնարավորություն
 . վոլեյբոլի դաշտի առկայություն
 . թեքահարթակներ

Գերագանգ աշակերտների թվի պակասում է
 հիմնական և ավագ օղակում,
 նկատվում է նաև աշակերտների թվաքանակի
 նվազում

. բոլոր դասասենյակների գույքի ապահովում
 . ճաշարանի սեղան աթոռները չեն
 համապատասխանում աշակերտների
 տարիքային չափսերին
 . դպրոցում առկա համակարգիչներից միայն
 երկուսն են նոր սերնդի համակարգիչներ
 . համակարգչային կաբինետի վերանորոգում
 և համապատասխան քանակի
 համակարգիչներով ապահովում
 . եռհարկանի դպրոցը սան հանգույց ունի
 միայն 1-ին հարկում
 . բուժկետ չկա
 . դասասենյակների հատակները
 բետոնապատ են
 . հիմնական դասասենյակները գտնվում են
 հյուսիսային կողմում, չունեն
 համապատասխան լուսավորություն
 . էլեկտրական լարերի բացակայություն շատ
 դասասենյակներում և միջանցքներում
 . կոյուղագծի վերանորոգում
 . արհեստանոցի վերանորոգում և գույքի
 ապահովում
 . ռազմագիտության կաբինետի պատաստների
 և ուսումնամարզական գույքի ապահովում
 . հանդիսությունների և միջոցառումների
 սրահի անմխիթար վիճակ
 . մարզադահլիճի անմխիթար վիճակ,

*մարզական գույքի պակաս
.հակահրդեհային պահանջներին
համապատասխան սարքավորումներ
.բուժետի բացակայություն*

Աշակերտների կրթական մակարդակը բարձրացնելու համար պետք է հնարավորություններ ստեղծել լրացուցիչ կրթական ծառայություններից օգտվելու , դպրոցական միջոցառումների մասնակցություն: Անցկացնել դպրոցական և միջդպրոցական մրցույթներ:

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»-ը ունի ԿԳՄՄՆ-ն կողմից հաստատված պարտադիր առկայության և գործունեության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը

- . Դպրոցի կանոնադրություն
- . Պետական գրանցման վկայական
- . Դպրոցի շենքի սեփականության վկայական
- . Հաստիքացուցակ
- . Տարիֆիկացիոն ցուցակ
- . Աշխատողների և աշակերտների հրամանագրքեր
- . Սովորողների շարժի մատյան
- . Աշխատողների անձնական գործ
- . Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
- . Դպրոցի խորհրդակցական մարմինների արձանագրությունների մատյան
- . Դասալսումների և ծնողական ժողովների արձանագրությունների մատյան
- . Ուսուցչի բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյան

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցի կանոնադրության համաձայն «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»-ում ձևավորվել է կառավարման խորհուրդը՝ միացյալ «Բերքաշատի միջնակարգ դպրոց» ԳՈԱԿ-ի հետ: Կառավարման խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ խորհրդի նախագահ է ընտրվել Արտակ Առաքելյանը: 2022թ-ին դպրոցի կառավարման խորհրդի անդամների համար իրականացվել է վերապատրաստումներ, որին մասնակցել են խորհրդի անդամները:

Դպրոցի կառավարման խորհուրդը գործում է իր լիազորությունների սահմաններում և իրականացնում է դպրոցի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն: Կառավարման խորհուրդը ուսումնասիրում է հաշվապահական և կադրային նորմատիվները, լսել և հաստատել է 2022-2023 ուս տարվա ներքին գնահատումը, հետևել է դպրոցի ծախսերին և բյուջեի հաստատմանը: Կառավարման միասնական խորհուրդը աշխատում է արդյունավետ, նպաստելով կրթական գործընթացի համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն:

Կառավարման խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11, կետ 1.2

Դպրոցում գործում են խորհրդակցական մարմինները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Ծնողական խորհուրդ Մանկավարժական խորհուրդ Աշակերտական խորհուրդ Մեթոդական միավորումներ</p> <p>Ծնողական խորհուրդ</p> <p>Ծնողական խորհուրդը համագործակցում է ուսուցիչների հետ . ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցում տեղի ունենալիք բոլոր միջոցառումներին . ծնողների նախաձեռնությամբ վերանորոգվել են դասասենյակներ, որոնք պետք է գույքով համալրվի պետական բյուջեի միջոցներով . ծնողական խորհուրդը անցկացնում է ժողովներ, քննարկվող հարցերը և խնդիրները արձանագրում համապատասխան մատյաններում . համագործակցում են համայնքի հետ</p>	<p>Չկա շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ</p> <p>.Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներ . երեխաների իրավունքների պաշտպանություն . աջակցություն դպրոցի ԿԱԳԿՈՒ սովորողներին . ծնողներին ապահովել տեղեկատվությամբ, կազմակերպել սեմինարներ, խորհրդատվություն . ծնողների իրավունքները և պարտականությունները</p>

. ծնողական խորհուրդը մասնակցում է դպրոցի մշակութային կյանքին
 . աջակցում է դպրոցին ուսումնանյութական բազայի հարստացմանը
 . համագործակցում և մասնակցում է արտադպրոցական, արտադասարանական միջոցառումներին

Աշակերտական ինքնավարության խորհուրդ

. ըստ իրենց նախասիրության կազմակերպում են միջոցառումներ
 . ազգային և համամարդկային արժեքների պահպանում
 . ինքնակառավարման կարողությունների զարգացում
 . կարծիքի ազատ արտահայտում
 . սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն օժանդակում
 . արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ
 . միջոցառումների և մրցույթների կազմակերպում
 . մասնակցությունը համայնքին օժանդակող ծրագրերին
 . աջակցություն է ցուցաբերում մանկավարժական և ծնողական խորհրդին
 . նպաստում է դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը
 . համագործակցություն դասղեկների հետ

. համագործակցություն ՀԿ -ների հետ
 . հաստատության և ընտանիքի կապի ամրապնդում
 . սովորողների կարգապահության և հանախումների բարելավման աշխատանքներ
 . կարգապահական տույժերի կիրառում
 . իրավասություն և պատասխանատվություն

Դպրոցական աշակերտական ինքնավարության մարմինը ակտիվ մասնակցում է միջոցառումներին , համագործակցում է շրջանավարտների հետ: Կազմակերպում են մրցույթներ, գրական-գեղարվեստական միջոցառումներ և պատրաստվում են «Երբ որոտաց պատերազմը» թեմայով միջոցառման ներկայացմանը: Խորհրդակցական մարմինները համագործակցել և որոշել են այցելել համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքներ, իրենց հարզանքի տուրքը մատուցելու հարազատներին:

Կրթական մակարդակը բարձրացնելու համար պետք է կազմակերպել հանդիպումներ տարբեր ոլորտի ՀԿ-ների հետ և համագործակցել: Աշակերտական և մանկավարժական խորհուրդը պետք է կազմակերպի միջոցառողական մրցույթներ, գրքասերների մրցույթ և գրքի քննարկում: Չարգացնել գիրք կարդալու հմտությունները :

Կառավարման մարմինը՝ խորհուրդը գործում է կանոնադրության համաձայն:

Աշակերտական և ծնողական խորհուրդը չեն տիրապետում իրենց գործառնություն և ներքին իրավական ակտերի իմացության պակասը խանգարում է ճիշտ աշխատելուն: Պետք է կազմակերպել և ծնողխորհրդին ներկայացնել իրենց անելիքները, իրավունքները , պարտականությունները:

Խորհրդակցական մարմինները ևս պետք է հանդես գան առաջարկություններով և լինեն նախաձեռնող, որի կատարման համար արժանանան խրախուսման:

Չարգացնել մ/մ կարողությունները, նորարարական մեթոդներով և տեխնոլոգիաներով դասավանդումը, որի համար անհրաժեշտ են համակարգիչներ:

Խորհրդակցական քննարկումներ անցկացնել խորհրդակցական բոլոր մարմինների միջև: Համագործակցության սերտ կապ ստեղծել, որը տնօրենի գլխավոր նպատակն է:

Խորհրդակցական մարմինները ինքնավար են, ազատ իրենց գործունեություններում, պահպանում են իրենց իրավունքները և պարտականությունները:

Ուսումնական տարվա ավարտին կատարվում և իրականացվում է դպրոցի ներքին գնահատում:

Դպրոցի գործունեության թափանցիկությունը ապահովելու համար դպրոցի պաշտոնական կայքում տեղադրվում է ֆինանսական տարեկան հաշվետվությունը և հաստիքացուցակը:

Դպրոցը համագործակցում է՝

ԿԳՄՍ նախարարության, լիազոր մարմնի՝մարզպետարանի,

տեղական ինքնավարման մարմինների, ԿՏԱԿ-ի, ԿՉՆԱԿ-ի, ԵՄԻՍ-ի

Ինտերակտիվ կրթության հիմնադրամի, Իմ դպրոցի ,ՏՄԱԿ-ի հետ:

**ԾՆՈՂՆԵՐԻ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ և ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻ
ԱՌԱՉԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՄ ԱՅՑԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼԻՍ**

1. Տարրական դասարաններում երկարօրյա ուսուցման կազմակերպում
2. Ինֆորմատիկա առարկայի ուսուցման բարելավում
3. Դրամահավաքության վերացում
4. Արտադպրոցական խմբակների բացում
5. Գրադարանի վերանորոգում և համալրում գրքերով
6. Մարզադահլիճի վերանորոգում և համալրում մարզագույքով
7. Բուժետի բացակայությունը խիստ մտահոգում էր աշխտիրդին
8. Հանդերձապահարանների բացակայություն
9. Վնասված և կոտրված նստարանները բոլորի գլխավոր հարցն է
10. Դպրոցում բուժկետի բացակայություն
11. Սան հանգույցի ոչ բարվոք վիճակը
12. Խմելու ջրի խնդիրը
13. Աշխարհագրության քարտեզների բացակայություն
14. Միջոցառումների սրահի անբարվոք վիճակը

Այս և նմանատիպ հարցերն ու խնդիրները բոլորը ներառում են իմ զարգացման ծրագրում , խոստանալով որ կարճ ժամանակահատվածում կնշմարվի մեր աշխատանքը: Դպրոցը կապիտալ վերանորոգման կարիք ունի, որի համար բյուջեի ֆինանսական միջոցները բավարար չեն, պետք է գտնել բարերարներ և օրենքով սահմանված լրացուցիչ գումարների միջոցով վերանորոգման աշխատանքներ տանել :

ԴՊՐՈՑԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումն է, ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքի պայմանների ստեղծումն է: Հանրակրթական պետական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը: Կրթական ծրագրերի շրջանակում ապահովել սովորողների ուսուցումը և դաստիարակությունը:

Պահպանել սովորողների իրավունքները, դպրոցում ստեղծելով համապատասխան կրթադաստիարակչական միջավայր: Նպաստել սովորողների հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը:

Ստեղծել հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր: ՏՀՏ-ի միջոցների լիարժեք կիրառում դասապրոցեստում: Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած դպրոց: Ապահովելով որակյալ կրթություն, ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը առարկայական օլիմպիադաներում:

Ռազմահայրենասիրական ոգու բարձրացում, ռազմագիտության կարիքների կահավորում, ռազմական մրցույթների կազմակերպում, հանդիպումներ զինվորական սպաների հետ:

Առողջ մարմնում առողջ հոգի սկզբունքով դպրոցում զարգացնել և որակապես բարձրացնել ֆիզիկական կուլտուրայի դերը: Մարզադահլիճը համալրել գույքով և վերանորոգել, անցկացնել մրցույթներ, սպորտային խաղեր: Դպրոցը չի կարող մասնակցել մարզային սպորտային միջոցառումներին քանի որ սովորողները զրկված են մարզական բոլոր տեսակի գույքից:

Վերանորոգելով հանդիսությունների և միջոցառումների սրահը աշակերտները և ուսուցիչները կավելացնեն կազմակերպվող միջոցառումների քանակը: Կբարձրանա սովորողների գեղագիտական ճաշակը, կզարգանա բանավոր խոսքը:

Շահագրգռել մանկավարժներին կատարելու հետազոտական աշխատանքներ, աջակցել ,որպեսզի մանկավարժները իրենց աշխատանքները մշակեն և ներկայացնեն տպագրության: Երիտասարդ մանկավարժական համակազմը պետք է ունենա խրախուսանքի արժանացած ուսուցիչներ:

Արդիական և օգտակար նորամուծությունների շնորհիվ բարձրացնել մանկավարժների մասնագիտական որակը, ապահովել կրթության առանձնահատկությունները:

Ունենալ 21-րդ դարին համապատասխան մրցունակ և կարողունակ շրջանավարտ:

ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Խնդիրներ	նպատակներ	կատարողներ	Ժամանակ
<p>.Մաքրել, բարեկարգել դպրոցի տարածքը, կատարել ծառատունկ, մուտքի երկու կողմերում տնկել վարդեր, ծաղիկներ</p> <p>. Մուտքի մոտ տեղադրել նստարաններ</p>	<p>Ունենալ գեղեցիկ բարեկարգ դպրոցամերձ տարածք</p> <p>.Գեղեցիկ է և անհրաժեշտ</p>	<p>Տնօրենություն, աշակերտներ, ուսուցիչներ</p> <p>Փինանս չի պահանջվում</p> <p>Համայնք, ծնողական խորհուրդ</p>	<p>2023-2028թթ</p> <p>2023-2024թթ</p>
<p>. Վերանորոգել գրադարանը , համալրել մանկական, մասնագիտական և գեղարվեստական գրքերով</p>	<p>. զարգացնել ընթերցանությունը ապահովել գրքերով</p>	<p>Անհատներ՝ նվիրատվություն, պետ. բյուջե, ծնողներ</p>	<p>2023-2025թթ</p>
<p>. Առաջին դասարան հանախող աշակերտներին նվիրել դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ</p>	<p>.օգնություն ցուցաբերել դպրոցահասակ երեխաներին</p>	<p>Բարերարներ, համայնք</p>	<p>2023-2028թթ օգոստոս</p>
<p>. Դասասենյակները ապահովել նոր նստարաններով և համապատասխան գույքով</p>	<p>.սովորողի իրավունքների պահպանում,սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում</p>	<p>Պետ. բյուջե Բարերարներ, ՀԿ-ներ</p>	<p>2023-2028թթ</p>
<p>.Մարզասրահը ապահովել համապատասխան մարզական գույքով</p>	<p>.Չարզացնել սպորտի հանդես սերը</p>	<p>Պետ. բյուջե</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Ուսումնագիտության կաքինետը համալրել համապատասխան ուսումնական գույքով</p>	<p>. ռազմական պատրաստվածության զարգացում</p>	<p>Պետ. բյուջե Սպորտային կառույցներ, անհատ նվիրատուներ</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Խմբակի բացում ձեռքի աշխատանքների</p> <p>.Չբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ հիմնել տնկարան</p>	<p>.մասնագիտական կողմնորոշում</p> <p>. զարգացնել ձեռնարկատիրություն ստանալ շահույթ</p>	<p>Դրամաշնորհ Բարերարներ Խորհրդակցական մարմիններ, համայնք</p>	<p>2023-2028թթ</p>
<p>.Ուսումնադաստիարակչա</p>			

<p>կան աշխատանքների բարելավում մանկավարժների խրախուսում</p>	<p>. ոգևորել և զնահատել ուսուցչի աշխատանքը</p>		<p>2023-2028թթ</p>
<p>. Բաց դասերի, միջոցառումների քանակի ավելացում</p>	<p>Աշխատանքները դարձնել թափանցիկ, բարձրացնել կրթական մակարդակը</p>	<p>Տնօրենություն Խորհրդակցական մարմիններ</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Ծնողներին ներգրավել սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում</p>	<p>Համագործակցություն ուսուցչի և աշակերտի հետ, փոխադարձ վստահության ձևավորում</p>	<p>.տնօրենություն Ծնողներ, համայնք</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Աջակցություն ցուցաբերել ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին, ընդգրկելով նաև ծնողխորհրդին</p>	<p>.թեթևացնել ընտանիքի հոգսը, կոլեկտիվ աշխատանք</p>	<p>.տնօրենություն Խորհրդակցական մարմիններ</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Ստեղծել հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ</p>	<p>Փորձի փոխանակում և ֆինանսական աջակցություն</p>		<p>2023-2028թթ</p>
<p>. Բուժկետի բացում</p>	<p>. բուժօգնություն անհրաժեշտության դեպքում</p>	<p>Պետական բյուջե</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Կազմակերպել հանդիպումներ արվեստագետների, գրողների, զինվորականների, ՏՀՏ ոլորտի մասնագետների հետ</p>	<p>.մասնագիտական կողմնորոշում, հայրենասիրության զարգացում</p>	<p>Տնօրենություն Կրթության վարչություն, ՀԿ-ներ</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Հատուկ ուշադրություն և վերահսկողություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին</p>	<p>. պաշտպանել ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքները, ստեղծել համապատասխան պայմաններ</p>	<p>.տնօրենություն մանկավարժներ ծնողական խորհուրդ, պետ. բյուջե</p>	<p>2023-2028թթ</p>
<p>. Հաստատությունում ապահովել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ, բացառել սովորողին ֆիզիկական և հոգեբանական</p>	<p>երեխան հասարակության լիիրավ անդամ է և նրա իրավունքները պետք է</p>	<p>Տնօրենություն դպրոցի աշխատակազմ աշակերտներ</p>	<p>2023-2028թթ 2023-2025թթ 2023-</p>

<p>դասասենյակների վերանորոգման աշխատանքներ</p> <p>. Հասարակություն պետք է մուտք գործեն բանիմաց, կիրթ, հայրենասեր, ճկուն միտք և հստակ կողմնորոշվելու հատկություններով օժտված շրջանավարտներ:</p> <p>. Համագործակցել կրթական քաղաքականություն իրականացնող կազմակերպությունների հետ</p> <p>. Կապ պահպանել առաքելական եկեղեցու սպասավորների հետ, տոնել եկեղեցական տաղավար տոները</p> <p>. Կրթամշակութային օջախների մշտական այցելություն</p>	<p>ստեղծում</p> <p>Գրագետ, բարեկիրթ և հասարակության համար պիտանի շրջանավարտ ունենալ</p> <p>Վեր դասել ազգայինը լինել նվիրյալ, ավանդույթները և մշակույթը կարևորել ճանաչել հայկական արվեստը</p> <p>Մշակութային դաստիարակությունը մարդու զարգացման մակարդակ է, որը ուսուցման մեթոդով անցնում է սերնդէ սերունդ:</p>	<p>Բյուջե, բարերարներ</p> <p>Կրթական համակարգ, տնօրենություն աշխատակազմ, խորհրդակցական մարմիններ</p> <p>Կրթական համակարգ տնօրենություն խորհրդակցական մարմիններ</p> <p>ԿԳՄՍ-նախ., դպրոցի տնօրենություն, խորհրդակցական մարմիններ, մշակութային կենտրոններ</p>	<p>2023-2028թթ</p> <p>2023-2028թթ</p> <p>2023-2028թթ</p> <p>2023-2028թթ</p>
--	--	--	---

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակները, խնդիրները և գործողությունները փոխկապակցված են , բխում են մեկը մյուսից և որպես մեկ ամբողջություն տարբեր ուղղություններով հանգեցնում են տվյալ ուսումնական հաստատության զարգացմանը:

Նպատակներս արդյունավետ իրականացնելու համար առաջ եմ քաշել հիմնախնդիրները, որի դեպքում հնարավոր կլինի փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք և հասնել դպրոցի առաքելության իրականացմանը:

ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Առկա հիմնախնդիրների լուծուման համատեքստում հանրակրթության նպատակաուղվածության առավել արդյունավետ իրագործումը անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, էթիկայի նորմերի համընդհանուր ներդրումն է:

Յուրաքանչյուր երեխայի կրթական և սոցիալական աջակցության համար մեծ նշանակություն ունի դպրոց-համայնք-ընտանիք կապը: Ընտանիքի հետ համայնքի կապը դպրոցները ավելի ուժեղ է դարձնում: Ծնողների ներգրավումը դպրոցական և համայնքային աշխատանքներին ստեղծում է առողջ և անվտանգ համայնք, բարելավում երեխայի հոգեբանական աշխարհը, բարձրացնում մարդկային արժեքները:

Համայնք- դպրոց կապը ամրապնդելու համար պետք է իրականացնել այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են նախագծային աշխատանքները, որը ընդգրկի նաև համայնքին: Կառաջանա միմյանց հանդեպ փոխադարձ վստահություն և հոգածություն:

Դպրոցի ներքին կարգապահական կանոնների պատշաճ կատարման համար ուսումնական հաստատությունում մասնակիցները պետք է իմանան իրենց իրավունքները և պարտականությունները: Բարձրագույն արժեք ձևավորելու և կրթության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ

-անձը գիտակցի դրա անհրաժեշտությունը

-բարձրանա դպրոցի և ուսուցչի դերն ու հեղինակությունը

-անձի դաստիարակությունը բխի հասարակական բարոյական հատկանիշներից

-անձը տիրապետի իր հասարակական դերին

-հասարակական հարաբերությունների կարգավորման գործում կարևորի դաստիարակությունը՝ էթիկայի նորմերի յուրացման պարտադիր պայմանով

Տեղեկատվական դաշտը հնարավորություն է ընձեռնում տարատեսակ ուսուցողական նյութեր ձեռք բերելու և կիրառելու համար:

Անհրաժեշտ է ուսումնական հաստատություններն ապահովել համապատասխան ձեռնարկներով, ուղեցույցներով: Բարձրացնելով ուսուցչի դերն ու հեղինակությունը, կրթության հարգը, սովորողների և ընտանիքի անդամների մոտ կձևավորվի մշակույթ՝ բարձր գիտակցում ունեցող անձի ձևավորում: Սովորողի մոտ կձևավորվի ինքնաճանաչողություն , կգարգանա անձի սոցիալական վարքագիծը:

Լավ կրթություն ստանալը կնպաստի անհատի կենսապայմանների լավացմանը և հիմք կհանդիսանա ամուր ընտանիք ստեղծելուն: Կձևավորվի հոգատարություն շրջակա միջավայրի, համայնքի մաքրության և բնապահպանության գործում:

ՀՀ-ը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

ՀՀ օրենքը / ՀՕ-200-Ն/ համաձայն որի հանրակրթական համակարգում անցում է կատարել համընդհանուր ներառական կրթության: Քանի որ դպրոցը ունի ԿԱՊԿՈՒ

երեխաներ, ուստի այդ աշակերտները հանրակրթական հիմնական ծրագրերը պետք է յուրացնեն, որի համար անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ խելամիտ հարմարեցումներ: Պետք է կիրառվի երեխայի կրթությանն աջակցելու եռաստիճան համակարգ

1. դպրոց

2. տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն

3. հանրապետական կենտրոն

ԿԱՊԿՈՒ երեխաները պետք է մասնակցություն ունենան ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին: Նրանք դուրս չեն մնում կրթությունից:

Խնդիր է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ է հմտություն՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

Կրթության որակը բարձրացնելու համար աշակերտների մասնակցությունը պետք է ապահովել: Բոլորը ներառվեն տվյալ դասին, լինի հավասար բաշխում: Լինի այնպիսի միջավայր, որ բոլորը լինեն հավասար ըստ կրթական չափորոշիչների:

Դպրոցը ըստ իր զարգացման առաջնահերթությունների պետք է ներդնի գիտականորեն հիմնավորված, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը:

Դպրոցում առաջացած խնդիրները լուծելու համար պետք է հետևողական լինել, նպատակ դնել լուծելու առաջ եկած խնդիրները և նշել գործողությունների շարքը: Համագործակցել ՀԿ -ների հետ, համայնքի հետ, բարեգործական կազմակերպությունների: Խնդիրները ներկայացնել շահագրգիռ անձանց, պլանավորել գործողությունները լուծել խնդիրները:

Աշակերտների կրթական մակարդակը բարձրացնելու համար զինել մեղիագիտելիքներով, զարգացնել մոտիվացիան: Աշակերտների առաջադիմությունից զատ նրանց կատարած լավագույն աշխատանքները արժանացնել խրախուսանքի: Կահավորված և վերանորոգված դասասենյակներում դասապրոցեսները կնպաստեն կրթական որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման փուլում իմ առջև դրված են մի շարք նպատակներ և այդ նպատակներին հասնելու համար կան խնդիրներ: Առաջացած խնդիրները լուծելու համար պետք է որոշակի գործողությունների կատարում:

ՆՊԱՏԱԿ Կրթական պրոցեսի ապահովման պայմանների համապատասխանելիություն նորմատիվային պահանջներին.

Սովորողների կրթական ձեռքբերումների զարգացում ուսումնառության ընթացքում

Շրջանավարտները ակադեմիական գիտելիքներից զատ ձեռք բերեն նաև կրթական և գործնական խնդիրների լուծման կարողունակություններ, տիրապետեն ուսումնա-

ճանաչողական, հետազոտական, հաղորդակցական, տեղեկատվական հմտություններին և պրակտիկ գործունեության կարողություններին:

Սովորողների մեղիագրագիտության գիտելիքների ձեռք բերում

ԻՆՏԻԻՐՆԵՐ.- Կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում և կառավարում

- Կրթության որակի խնդիրները բացահայտող ախտորոշիչ մեխանիզմների ներդրում

- Ուսուցիչների վերապատրաստման և կարողությունների զարգացման կայուն և արդյունավետ համակարգի ձևավորում

-Կրթական և մեթոդական նորարարությունների ներմուծում՝ կրթական բովանդակության արդիականացում

- Սովորողի մշակութային, հոգևոր, բարոյական ինքնության ձևավորում

-Դպրոց- պետություն, դպրոց- համայնք արդյունավետ համագործակցություն և խրախուսում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ- Ուսումնասիրել փոփոխված չափորոշիչային նոր պահանջները ՄՄ- ում, մշակել դրանց ներդրման գործողությունների ծրագիր

-Բարձր դասարանի աշակերտների շրջանակներում կատարել հարցումներ մշակութային, կրթական, հոգևոր, կամպենտենցիաների զարգացմանն ուղղված կարիքների բացահայտման և մեխանիզմների իրականացման նպատակով

- Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ SՀS գործիքների հետագա ընդլայնման համար

-Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նախագծային ուսուցման, ուցումնա-հետազոտական աշխատանքների արդյունավետ անցկացման նպատակով

- Ծարունակական կազմակերպվի անձնակազմի ինտենսիվ վերապատրաստման դասընթացներ՝ կարողունակությունների վրա հիմնված կրթության բաղադրիչին անցնելու նպատակով

Պատասխանատուներ՝ ԿԳՄՄ, ԿԶՆԱԿ, դպրոց

- Ախտորոշել առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթական կարիքները և մշակել համապատասխան գործողություններ

- Մեթոդական սեմինարների հաճախակի կազմակերպում, փորձի փոխանակում

- Սովորողների առաջադիմության ստուգում տնօրենության կողմից գրավոր աշխատանքների, ինտենսիվ դասալսումների, հրապարակային դասերի, հայտորոշիչ թեստերի, հարցումների միջոցով

- դասավանդման որակի գնահատում, ամփոփել արդյունքների ներքին գնահատումը

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Որպես կանոն դպրոցի ֆինանսավորումը շատ սահմանափակ է, քանի որ ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ աշակերտ թվով պայմանավորված և բավականացնում է հիմնականում աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական, տնտեսական ծախսերի վճարմանը: Հաճախ դպրոցի խնդիրները առաջանում են ֆինանսական միջոցների պակասից, որի համար էլ պետք է ճիշտ կողմնորոշվել, ունենալ ճկուն մտածելակերպ և կատարել իրատեսական պլանավորում: Կոտրված և հնամաշ գույքը փոխել, կամ վերանորոգումները ոչ թե պետք է կատարել միանգամից, այլ պլանավորել և յուրաքանչյուր տարի թարմացնել 20-30%-ը: Դպրոցի տնօրենը պետք է մեխանիզմներ իրականացնի և պատկերացնի հնարավորությունները, ճիշտ պլանավորի ծախսերը, հավանություն ստանա խորհրդի անդամների և հիմնադրի կողմից:

Դպրոցը պետք է կատարի ֆինանսական ծախսերի ճշգրիտ և իրատեսական պլանավորում, երբեմն խնդիրների լուծումը փնտրել հասարակական և բարեգործական կազմակերպությունների շրջանակներում:

Լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններ

Ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Բարեգործական, նպատակային ներդրումներ, ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա կազմակերպությունների նվիրատվություն:

ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությամբ չհակասող գործունեությունից ստացվող միջոցներ:

Դպրոցը կարող է լրացուցիչ ֆինանսավորում ձեռք բերել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելով: Ձեռնարկատիրական կրթության ներդնումը կարևոր ունակություն է բոլորի համար, այն սովորեցնում է լինել նորարար, կարողանալ արագ կողմնորոշվել իր աշխատանքներում, մտածել ստեղծագործաբար: Ձեռնարկատիրական կրթությունից ձեռք բերած գիտելիքները և հմտությունները սովորողները կկիրառեն իրենց ողջ կյանքի ընթացքում, աշխատավայրում անկախ ընտրած մասնագիտությունից: Չարգանում է թիմային աշխատանքը:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ոլորտները բազմազան են, որոնք կրնտրենք աշակերտների և ծնողների հետ համաձայնության գալով, սակայն տնկարանի հիմնումը և լրացուցիչ գումար ձեռք բերելը իմ ծրագրի մի մասն է:

Նախատեսվում է , որ ձեռնարկատիրությունից ստացված շահույթը օգտագործելի դպրոցի կանոնադրական խնդիրների օգտագործման նպատակով

ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

«Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»-ի աշխատանքները լինելու են առավելագույնս բաց և թափանցիկ: Ամենամյա կատարած աշխատանքների հաշվետվությունները ներկայացնել կառավարման խորհրդին: Կատարած աշխատանքները պետք է հանրայնացնել տեղադրելով կայքերում: Նոր Կեսարիայի յուրաքանչյուր բնակիչ կարող է իրեն հուզող ցանկացած հարցերով և առաջարկություններով էլեկտրոնային հարթակով դիմել, որոնք ենթակա կլինեն քննարկման:

Յուրաքանչյուր ներդրող պետք է տեսնի, որ իր կատարած ներդրումները ծառայում են իրենց նպատակին: Բոլոր միջոցառումները, բաց դասերը կազմակերպված մրցույթները պետք է բոլորը հասանելի լինի համայնքին:

Դպրոցի բյուջեից տնտեսված գումարները պետք է ուղղվեն կրթության որակի բարձրացմանը: Այս ամենը թափանցիկ և բաց պետք է լինի կառավարման խորհրդի , ուսուցիչների համար:

ԶԾ-Ի ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչնդոտող հնարավոր անցանկալի գործոնն է: Փոփոխություններին ուղղված ցանկացած գործողություններ

կապված են ռիսկերի հետ: ՉԾ-ի իրականացման գործընթացում անպայման պետք է հաշվի առնել ռիսկերը, քանի որ դրանք առարկայական են դառնում ծրագիրն իրականացնելու փուլում: Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման հաջողությունը կախված է բյուջետային միջոցների արդյունավետ ծախսերից: Ոչ ճիշտ պլանավորումը կարող է խոչընդոտ հանդիսանալ ծրագրավորված աշխատանքին:

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՆԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ
<ul style="list-style-type: none"> . Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ . Դպրոցի նյութատեղնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն . Դպրոցի ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ . Դպրոցի միջավայրի և ձևավորված մշակույթի խոչնդոտներ . Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն . Չնախատեսված ծախսեր . Դպրոցի գործունեությանը համայնքի պասիվ համագործակցություն և կարծրատիպի ձևավորում 	<ul style="list-style-type: none"> . Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, հոգաբարձուների խորհրդի ձևավորում, գտնել հովանավորներ և բարերարներ . Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում . Դիմել համապատասխան մարմիններին՝ ֆինանսական միջոցներ տրամադրելու համար . Հաշվի առնել չնախատեսված ծախսերը և ունենալ պահպանված գումար . Ծնողխորհուրդի մասնակցություն դպրոցաշինության գործում

Դպրոցում կատարվող աշխատանքների կատարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը, մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողներ, խորհրդակցական մարմինները: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ:

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ,
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

ԴՉԾ-ի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է: Չարգացման ծրագիրը պլանավորում է ռազմավարություն , որոնք նպատակաուղղված են ծրագրի իրականացմանը: Չարգացման ծրագիրը կազմելիս ծնողների, աշակերտների և մանկավարժների կարծիքները խիստ անհրաժեշտ են: Պետք է ներառել նաև նրանց կողմից բարձրացված խնդիրները և առաջարկությունները:

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալվող կատարողները՝ այսինքն իրականացնող ու վերահսկող շահառուները: Դպրոցի շահառուները կառավարման և խորհրդակցական մարմիններն են, որոնք իրականացնում են վերահսկողություն, հանրակրթական ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի հիմքում դպրոցի կրթական, ֆինանսատնտեսական ցուցանիշներն են:

Կրթական ցուցանիշները միջոցներ են, որոնց օգնությամբ կարելի է հետևել դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական բոլոր գործընթացներին:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմ է, որը ուսումնական հաստատության գործունեությանը տալիս է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, ծնողներին և սովորողներին:

Պարզ կրթական ցուցանիշները բացահայտում են դպրոցի գոնծունեությունը որոշակի հասվածում: Դրանք պարզ չափումներ են արտահայտված թվերով և տոկոսներով:

-Ուսուցիչների ընդհանուր թիվ 22

- Աշակերտների ընդհանուր թիվ 217+22

-Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ 21

-Ուսուցիչ-աշակերտ թվի հարաբերակցություն

-Մեկ աշակերտին բաժին ընկնող տարածքը

-Դասագրքերի թիվը մեկ աշակերտի հաշվով

-Տվյալ առարկայից դասարանի սովորողների միջին գնահատականը

Այս ցուցանիշների վրա ազդում են այլ ցուցանիշներ՝ ուղղակի և ոչ ուղղակի: Ոչ ուղղակի ցուցանիշները ուղղակիորեն կապված չեն դպրոցի հետ, սակայն ուղղակիորեն ազդում են ուսումնական գործընթացի վրա:

-Սոցիալ- տնտեսական գործոններ

-Ուսուցիչների և աշակերտների համար բժշկական ծառայությունների մատչելիություն:

ԴՉԾ-ի վերահսկողության արդյունավետ միջոցառումներն են.

--Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տարեկան առնվազն երկու անգամ ուսումնական աշխատանքային ծրագրում ընդգրկված ՉԾ-ի դրույթների կատարողականների հաշվետվության քննարկում և համապատասխան գնահատականների ամրագրում

--Դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում

-Համայնքին և այլ շահառուներին ՉԾ-ի իրականացման աշխատանքներին ներգրավում

-Դպրոցի խորհրդի մասնակցությունը ԴՉԾ-ի արդյունքների գնահատմանը

Դպրոցում կատարվող աշխատանքների կատարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործունեության մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը, մանկավարժական աշխատողները, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները: Այն դպրոցի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ; Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունն և բարձրացնել նրանց դերը:

ՉԾ-ի ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- . ՀՀ սահմանադրություն
- . Կրթության մասին» ՀՀ օրենք
- . «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- . «Երեխաների իրավունքների մասին » կոնվեցիա
- . Աշխատանքային օրենսգիրք
- . Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին ՀՀ օրենք
- . «Լեզվի մասին»ՀՀ օրենք
- . Դպրոցի կանոնադրություն
- . Դպրոցի ներքին իրավական ակտեր
- . Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ և հրամաններ